



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

«23» սեպտեմբեր 2012թ. N 48 - Ա / 1

«22» Ծեպտեմբեր 2012թ. N 1174 - Ա

**Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն**

ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՄԱՆԿԱՏԱՆԸ ՏԵՂԱԿՈՐԵԼՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ  
ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1735-Ն որոշման 2-րդ կետի բ) ենթակետը՝


**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ**

Հաստատել երեխաներին մանկատանը տեղավորելու բժշկական ժամանակավոր հակացուցումների ցանկը համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության  
աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարար




Հայաստանի Հանրապետության  
առողջապահության  
նախարար



Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի  
2012թ. \_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_ Ա հրամանի

ՀՀ առողջապահության նախարարի  
2012թ. Տեպրեբ 22 թիվ \_\_\_\_\_ Ա հրամանի



ՑԱՆԿ

**ԵՐԵՎԱՆԵՐԻՆ ՄԱՆԿԱՏԱՆԸ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ**

1. Մանկատուն ընդունվելու ժամանակավոր հակացուցումներն են՝
  - 1) բոլոր տեսակի վարակիչ հիվանդությունները, այդ թվում թոքերի ակտիվ տուբերկուլոզը՝ մինչև առողջացումը և վարակակրության հերքումը,
  - 2) բարձր ջերմություն և անհայտ ծագման ցաներ՝ մինչև պատճառի բացահայտումը, առողջացումը և վարակակրության հերքումը,
  - 3) հոգեկան հիվանդություններ, որոնք ուղեկցվում են հակումների և վարքի կոպիտ խախտումներով, փսիխոմոտոր գրգռված վիճակով, որոնք վտանգավոր են իր՝ երեխայի և միաժամանակ շրջապատի համար,
  - 4) փսիխոպատիկ սիմպտոմատիկա,
  - 5) էպիլեպսիա, հաճախակի ցնցումներով (5-6 անգամ և ավելի), գիտակցության մթնշաղային վիճակ,
  - 6) շիզոֆրենիա՝ սրացման շրջանում կամ դեֆեկտով:

2. Սույն ցանկով սահմանված ժամանակավոր բժշկական հակացուցումների առկայության ճշտման անհնարինության դեպքում՝ բժշկի եզրակացությամբ երեխան տեղավորվում է հաստատության մեկուսարանում: